

ՄՓՅՈՒՔԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

ՀԱԿՈՒ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Այսօր «սփյուռքը» դարձել է ոչ միայն ինտելեկտուալ, այլ նաև մշակութային և քաղաքական օրակարգերի առանցքային թեմաներից մեկը: «Սփյուռք» հասկացության հաճախակի կիրառությունը, թերևս, չէր կարող ազդեցություն չունենալ հասկացության ծավալային փոփոխությունների վրա: Ըստ այդմ՝ հենց *սփյուռքն է դարձել սփյուռքային*, որը Ռոջերս Բրուքսերի մեկնաբանմամբ՝ ենթադրում է «*հասկացության նշանակությունների սփռում սենանտիկ, հայեցակարգային և դիսցիպլինար տարածությունների մեջ*»¹:

Ի տարբերություն 1990-ական թվականների, երբ սփյուռքի ուսումնասիրման մոտեցումներում քննարկումների առանցքը «հայրենիք» հայեցակարգն էր, 2000-ականներից սկսած դասական դարձած այդ մոտեցումների կիրառման դեպքերը նվազում են՝ հանգեցնելով հայեցակարգային և հարացուցային փոփոխությունների²: Այստեղ խոսքը վերաբերում է ոչ միայն միգրացիայի սահմաններին, այլև «սահմանների միգրացիային»³: Այդ առումով անհրաժեշտ է նաև նշել, որ ներկայումս գոյություն ունեն հետազոտական ուղղություններ, որոնք վերաբերում են այնպիսի «սփյուռքային ձևերի»⁴ ուսումնասիրություններին, որոնք անսահման են դարձնում «սփյուռք» հայեցակարգի սահմանները⁵: Այդպիսի զարգացումներն իրենց ազդեցություններն են ունենում ինքնության իմաստային փոփոխության վրա: Այդ մասին է վկայում նաև այն, որ այսօր ինքնությունը, բացի վերլուծական կատեգորիա լինելուց, վերածվել է լրատվամիջոցների և հանրային մշակույթի տարբեր ձևերի կողմից օգտագործվող կատեգորիայի⁶:

¹ Brubaker Rogers, The “Diaspora”, Ethnic and Racial Studies, Vol. 28, № 1, 2005, p. 1.

² Հարացուցային առումով սփյուռքի ուսումնասիրությունը կապված էր **հրեական սփյուռքի** հետ: Անգամ հանրագիտարաններում երբեմն սահմանափակվում էին միայն հրեական դեպքի քննարկմամբ: Այդ առումով Քլիֆֆորդը նշում է, որ սփյուռքագիտության դիսցիպլինար զարգացման համար պետք է ընդունելի լինի հրեական պատմության ազդեցությունը, սակայն այն չպետք է դիտվի որպես սահմանային մոդել (տե՛ս Clifford James, Diasporas, Cultural Anthropology, Vol. 9, № 3, 1994, էջ 306):

³ Տե՛ս Brubaker Rogers, նշվ. աշխ., էջ 3:

⁴ Որպես օրինակ՝ կարելի է նշել **թվային սփյուռքը** (տե՛ս «Հայկական տեղեկատվական համայնքային ռեսուրսները հետխորհրդային երկրներում», խմբ.՝ Գագիկ Հարությունյան, Եր., 2009, Brinkerhoff Jennifer, Digital Diasporas: Identity and Transnational Engagement, Cambridge Uni. Press, 2009):

⁵ Տե՛ս Tölölyan Khachig, The Nation-State and Its Others: In Lieu of a Preface, Diaspora, Vol. 1, № 1, 1991, էջ 5:

⁶ Տե՛ս Brubaker Rogers and Frederick Cooper, Beyond Identity, Theory and Society, № 29, 2000, էջ 1-47:

Սահմանների պահպանումից դեպի ինքնության ձևավորում

Սփյուռքի սահմանների առկայությունն է, որ այն դարձնում է տարբերվող «համայնք», որում առաջնային են ինքնության հարցադրումները: Այդ սահմանների պահպանումը միջսերնդային գործընթաց է⁷, որը հնարավոր է հստակորեն մշակված ռազմավարությամբ ձուլման գործընթացների դեմ պայքարելով: Այդ առումով կարևորվում է սերունդների դասակարգումը: Այն պետք է ներառի ժամանակի և պատկանելության խնդիրները: Ժամանակի խնդիրը վերաբերում է արտագաղթին, իսկ պատկանելության խնդիրը՝ միգրանտների, նրանց ծնողների էթնիկ պատկանելությունների, ծննդավայրերին: Ամերիկահայ սոցիոլոգ Ա. Բակալյանն առաջարկում է սերունդները դասակարգել ըստ գաղթյալի և նրա ծնողների ծննդավայրերի⁸: Սակայն այս մոդելը չի քննարկում սփյուռքից սփյուռք միգրացիոն շարժերը. այսօր տեղաշարժեր տեղի են ունենում ոչ միայն հայրենիքից, այլև սփյուռքից դեպի այլ երկրներ, որոնք էլ ինքնության ձևավորման վրա կարող են ունենալ էական ազդեցություն:

Սերունդների հայեցակարգայնացումը թույլ է տալիս դատողություններ անել վերջիններիս ինքնությունների մասին: Մասնավորապես՝ ի տարբերություն առաջին սերունդների՝ հաջորդ սերունդների դեպքում հյուրընկալ հասարակության հետ ձուլումն ավելի բարձր մակարդակի դրսևորումներ կարող է ունենալ: Այս համատեքստում տրված սոցիալական ձևերի ինքնության ուսումնասիրությունները պետք է ընդգրկեն մի շարք այլ փոփոխականների չափումներ՝ արտագաղթի պատճառներ, իրավական կարգավիճակ, ծննդավայրի առկայություն, կրոնական պատկանելություն, գաղթյալի և նրա ծնողների խառնամուսնական կարգավիճակներ, լեզվի և մշակույթի իմացություն, քաղաքական հայացքներ, էթնիկ համայնքում ներգրավվածության մակարդակ և այլն⁹:

Սփյուռքի ավանդական սահմանման հիմքում ընկած են սահմանների ստեղծման (ինքնության) և հայրենիքի հարցադրումները: Սակայն անհրաժեշտ է նշել, որ գոյություն ունեն սփյուռքի հետարդիական բազմաթիվ սահմանումներ, որոնց հիմքում ընկած են հոսունության, շարժումների, սահմանների (ինքնության) ապակայունացման գաղափարները: Այս առումով վերքները, միավորելով այդ մոտեցումները, նշում է, որ սփյուռքները միևնույն ժամանակ և՛ էթնոսահմանափակ են, և՛ աշխարհաքաղաքացիական¹⁰: Սակայն այսօր սփյուռքագիտական մոտեցումներում սահմանումներից զատ բավարար չափով չեն քննարկում այնպիսի կարևորագույն հարց, ինչպիսին է *սփյուռքը որպես նոր սոցիալական տարածության և ինքնության ստեղծող*: Այս համատեքստում Կոհենը կարևորում է «պրիմոր-

⁷ Տե՛ս **Brubaker Rogers**, The Return of Assimilation?, Ethnic and Racial Studies, Vol. 24, № 4, 2001, էջ 531-548, **Alba Richard and Nee Victor**, Rethinking Assimilation Theory for a New Era of Immigration, International Migration Review, Vol. 31, № 4, 1997, էջ 826-874:

⁸ Տե՛ս **Anny Bakalian**, Armenian-Americans: From Being to Feeling Armenian, Transaction Publishers, New Jersey, 1993:

⁹ Տե՛ս «Յայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում», Գիտագործնական համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2010:

¹⁰ Տե՛ս **Werbner Pnina**, The Place which is Diaspora: Citizenship, Religion and Gender in the Making of Chaordic Transnationalism, Journal of Ethnic and Migration Studies 28 (1), 2002, էջ 120:

դիպլ ինքնությունը»: Նա սփյուռքը որակում է որպես «ազգային պետությունների միջև դիրքավորված»¹¹, ինչը ենթադրում է, որ այն գտնվում է ազգային պետության տարածաժամանակային գոտիներից դուրս: Մեկ այլ մոտեցման համաձայն՝ սփյուռքը դիտվում է որպես ազգային պետության հոմոգենությունը կազմաքանդող երևույթ¹²: Այս դեպքում ինքնությունը դիտվում է որպես հիբրիդ¹³, մշտապես փոփոխական ներկայացումներով: Սա ենթադրում է «անընդհատ գտնվել առնվազն երկու կողմերի միջև» կամ «մշտապես գտնվել կառուցման մեջ»¹⁴: Սփյուռքի այդպիսի սահմանումները շեշտադրում են ինքնությունների, ինչպես նաև մշակույթների ոչ կայուն, հոսուն էությունները:

Համանման ձևով է վերլուծվում նաև «տուն» հայեցակարգը, որը սահմանվում է որպես տարածք, որտեղ տարբեր շահեր ունեցողները պայքարում են իրենց սեփական տարածությունը սահմանելու համար: Ըստ այդմ՝ հենց այդ տարածությունում էլ լուկալացնում և ձևավորում են իրենց ինքնությունները: Ստացվում է, որ «տուն» անընդհատ գտնվում է շարժման մեջ՝ դիրքավորվելով տարբեր վայրերի միջև: Այստեղ կարևորագույն շեշտադրումը վերաբերում է պատկանելությանը, որը, ըստ Սարուայի, կայունության հիմք է¹⁵: Սակայն նախ և առաջ պետք է հասկանալ, թե ինչ ասել է տուն, կամ ինչն է կոնկրետ տարածքը դարձնում տուն: Այդ առումով կարևորվում են այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են՝ *Արդյո՞ք տունն այն վայրն է, որտեղ ընտանիքդ է ապրում, որտեղ մեծացել ես, թե՞ որտեղ թաղված են նախնիներդ: Արդյո՞ք տունն այն վայրն է, որտեղից տեղահանվել ես, թե՞ որտեղ հիմա ապրում ես:*

Վերոնկարագրյալ մոտեցումներում սփյուռքը չի դիտվում որպես մեկընդմիջ տրված: Այստեղ կարևորվում են այն ուղիները, որոնց միջոցով տեղահանվածները¹⁶ կարող են կառուցել իրենց ինքնությունները:

Պատկանելության խնդրից դեպի նոր տիպի ինքնություն

Վերքները գտնում է, որ սփյուռքային համայնքները մոբիլիզացված խմբեր են՝ մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական կազմավորումներ¹⁷: Սա նշանակում է, որ սփյուռքները մշակութապես և քաղաքականապես անդրադարձական են, դրանք ինքնության ներքին տարրեր

¹¹ **Cohen Robin**, The Making of Ethnicity: A Modest Defense of Primordialism. In: Mortimer, E. and Fine. R. (eds) People, nation and state. London: IB Taurus, 1999, p. 2.

¹² Տե՛ս **Elizabeth Mavroudi**, Diaspora as Process: (De)Constructing Boundaries, Geography compass 1/3, 2007, էջ 471:

¹³ Տե՛ս **Bhabha Homi**, The Location of Culture, London: Routledge, 1994:

¹⁴ **Hall Stuart**, Cultural Identity and Diaspora, In: Vertovec S. and Cohen R. (eds) Migration, Diasporas and Transnationalism, Cheltenham: Elgar, 1999, p. 299–314.

¹⁵ Տե՛ս **Sarup Madan**, Home and identity. In: Robertson, G. (ed.) Travelers' tales: narratives of home and displacement, London: Routledge, 1994, էջ 95:

¹⁶ Այստեղ «տեղահանվածներ» հասկացությունը չպետք է հասկանալ միայն բռնությունը տեղահանվածության իմաստով, որը ենթադրում է սփյուռքյան դասական մոդելը: Այն ավելի ընդգրկում է և ներառում է նաև կամավոր արտագաղթը, որը ներկայումս դիտարկվում է որպես սփյուռքաստեղծ պայման:

¹⁷ Տե՛ս **Werbner Pnina**, Theorising Complex Diasporas: Purity and Hybridity in the South Asian Public Sphere in Britain, Journal of Ethnic and Migration Studies 30 (5), 2004, էջ 896:

են ձևավորում, որոնք վերաբերում են նախ և առաջ «մենքի» սահմանմանը: Սփյուռքը դիտարկելով գործընթացի տեսանկյունից՝ ենթադրվում է, որ ժամանակը և տարածությունը ստատիկ չեն, այլ «նույնության» և «օտարության» կառուցման գործընթացում շարունակաբար «բանակցվող»¹⁸:

Աշխարհը դառնում է գլոբալ գործելու տիրույթ, և «ես-այլ» պատկերների զարգացման շնորհիվ տարբեր մշակույթներ հետզհետե ավելի են մոտենում միմյանց, որը շատ գիտնականներ ձևակերպել են որպես «պատկանելության խնդիր»: Աշխարհը դառնում է ավելի հոմոգեն, երբ մենք ականատես ենք լինում մեկ, թեկուզ հիբրիդացված մշակույթի և տարածության ձևավորման: Նման պայմաններում նույնականացման խնդիրը դառնում է ավելի առաջնային: Հոլը նույնականացումը դիտում է որպես անավարտ և գործընթացի մեջ գտնվող *կոնստրուկցիա*: Այստեղ նույնականացումը չի սահմանվում այն իմաստով, որ միշտ կարելի է ձեռք բերել կամ կորցնել, այլ կապվածության, միասնականության, սահմանվածության կամ դրա բացակայության գործընթաց է, որը նաև ենթադրում է տարբերակվածություն: Եվ քանի որ այն նաև տարբերությունների գործընթաց է, ուստի կապակցում և ստեղծում է սիմվոլիկ սահմաններ¹⁹:

Հոլի մոտեցումը մեկ անգամ ևս փաստում է, որ ինքնության ձևավորումը ստատիկ չէ, այլ, ընդհակառակը, գործընթաց է, որը միշտ շարժման մեջ է և անավարտ է: Մարդիկ և նրանց շրջապատող աշխարհն անընդհատ փոխվում են, և քանի որ ինքնությունները կապված են մեզ շրջապատող աշխարհի հետ, ուստի դրանք ևս փոփոխվում են: Հոլը նաև նշում է, որ ինքնությունները երբեք միասնական չեն, դրանք մասնատված են, դրանք միշտ կառուցվում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ տարբերությունների, դիսկուրսների, պրակտիկաների և դիրքերի միջոցով: Դրանք ծայրահեղ պատմականություն են պարունակում²⁰: Այստեղ քննարկվում է այն հարցը, որ ինքնությունը ոչ թե «լինելության», այլ «դառնալու» մասին է: Ինքնությունը, ըստ նրա, այն մասին չէ, թե ովքեր ենք մենք կամ որտեղից ենք գալիս, այլ թե ինչ ենք դառնալու, ինչպես ենք ներկայացված եղել և ինչպես ենք մեզ ներկայացնելու²¹:

Մեր ինքնությունը ձևավորելու համար նույնականացման աղբյուրների կարիք ունենք: Նույնականացումը այլ օբյեկտների հետ նույնացվելու գործընթացն է: Այս գործընթացում նույնականացման սուբյեկտը հակասական է, ինչը պայմանավորված է «այլերի» անընդհատ միջամտություններով²²: Այդ առումով կարևորվում է «ես-այլ» դինամիկան, քանի որ նույնականացումը տեղի է ունենում տվյալ սոցիալական տարածությունում նմանությունների և տարբերությունների բացահայտմամբ: Հետևաբար, նոր սոցիալական տարածությունում հայտնվածներն²³ անընդհատ գտն-

¹⁸ Տե՛ս **Nigel Caroline**, Constructing Difference and Sameness: The Politics of Assimilation in London's Arab Communities, *Ethnic and Racial Studies* 26 (2), 2002, էջ 258–287:

¹⁹ Տե՛ս **Hall Stuart, du Gay Paul** (Eds), *Questions of cultural identity*, Los Angeles: Sage, 1996, էջ 2-3:

²⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 4:

²¹ Տե՛ս նույն տեղը:

²² Տե՛ս **Rutherford Jonathan**, *The Third Space: Interview with Homi Bhabha*. In: J. Rutherford (Ed.): *Identity: Community, Culture, Difference*, London: Lawrence and Wishart, 1990, էջ 221:

²³ Սույն հոդվածում սփյուռքը դիտվում է որպես նոր սոցիալական տարածություն և իրականություն, որը գտնվում է անընդհատ փոփոխման և կառուցման գործընթացներում:

վում են տարբեր մշակույթների և ինքնությունների միջև ընթացող բանակցություններում: Այսինքն՝ ստացվում է, որ նոր սոցիալական տարածությունում առաջին հերթին քննվում է մշակութային ինքնությունը, որը Կոլիերը և Թոմասը սահմանում են որպես «այն խմբի հետ նույնականացում, որը կիսել է իր սիմվոլները, նշանակությունները, կանոնները և նորմերը, որոնք էլ յուրացվել են»²⁴: Նոր սոցիալական տարածությունում հայտնվածները գործում են տարբեր սոցիալական շրջանակներում՝ ձեռք բերելով տարբեր արժեհամակարգեր և նորմեր: Այս գործընթացը նրանց դարձնում է հիբրիդ էակներ: Սարուպը նրանց անվանում է «սահմանին ապրողներ»²⁵, քանի որ կոնկրետ իրավիճակում նրանք դիտվում են որպես «ներսի», իսկ մեկ այլ կոնկրետ իրավիճակում՝ քառտիկ «դրսի» անբաժանելի մաս: Միջմշակութային անհատները հյուրընկալ մշակույթի և՛ մաս են, և՛ մաս չեն: Նրանք միշտ գտնվում են ռիսկի գոտում, որը կապվում է այն գիտելիքի բացակայության հետ, ինչը այդ նոր տարածությունում կսահմաներ բարոյականությունը և արժեհամակարգը²⁶:

Հյուրընկալ հասարակություններում ավելի լավ ներգրավվելու համար նոր տարածություններում հայտնվածները պետք է ինտեգրվեն նոր մշակույթներում և գործեն ըստ դրանց: Այսինքն՝ այստեղ խնդիրը հիբրիդ ինքնությունների ձևավորումն է, որը միավորում է թե՛ հայրենիքի, թե՛ հյուրընկալ հասարակությունների իրականությունները, մշակույթները: Սակայն անհրաժեշտ է նշել, որ հիբրիդացվածությունը դրանց մղում է մարգինալ դիրքեր ինչպես հայրենիքի, այնպես էլ հյուրընկալ հասարակությունների նկատմամբ, քանզի լինելով հիբրիդ՝ նրանք լիովին չեն համապատասխանում որևէ իրականության, մշակույթի: Նորեկները, հայտնվելով նոր միջավայրում, բախվում են մի շարք վտանգների, այդ թվում՝ ես-երի և խմբային ինքնությունների զգացումների կորուստների: Եվ քանի որ նրանց ես-երը չեն հաստատվել «ծանոթ ուրիշների» միջոցով, ուստի նրանց պատկերացումները, թե ովքեր են իրենք և ինչպես են տեղավորվում նոր հասարակություններում, կարող են քայքայվել²⁷: Ստացվում է, որ նոր տարածությունում հայտնվածները պետք է հարմարվեն և ընդունեն այն մշակութային շրջանակը, որի մեջ են նրանք, սակայն շատերն անգիտակցաբար վերցնում են այդ մշակույթի տարրերը և դարձնում իրենց անհատական մշակույթի մասը: Ըստ այդմ՝ ձևավորվում է հիբրիդ ինքնությունը: Բհաբհան գտնում է, որ հիբրիդը ոչ միայն երկձայն է, այլ նաև երկլեզու²⁸: Այսինքն՝ այն տարածությունում, որտեղ նրանք գտնվում են, միշտ երկակիության պայքար է լինելու: Երկակիությունները նախ և առաջ վերաբերում են սոցիալ-մշակութային և լեզվական տարբերություններին: Այդ ձևերում երբեմն արտացոլվում են իրարարամերժ դիրքորոշումներ: Հետևաբար, հիբրիդայնությունը նրանց տեղավորում է «այլի» դիրքերում, որոնք գերիշխող դիսկուրսի մասեր չեն: Ըստ

²⁴ Collier Mary, Thomas Wilson, Cultural Identity – an Interpretive Perspective. International and Intercultural Communication Annual. Vol. XII, Thousand Oaks, CA: Sage. 1988, p. 113.

²⁵ Տե՛ս Sarup Madan, Home and Identity. In G. Robertson (Ed.): Travelers' Tales: Narratives of home and displacement, London: Routledge 1994, էջ 7:

²⁶ Տե՛ս Martin Judith, Nakayama Thomas, Intercultural Communication in Contexts. Boston: McGraw-Hill, 2004, էջ 291:

²⁷ Տե՛ս Singaravelu Helma, Pope Mark, (Eds.), A handbook for Counseling International Students in the United States. Alexandria, VA: American Counseling Association, 2007, էջ 16:

²⁸ Տե՛ս Bhabha Homi, The Location of Culture. London: Routledge, 1994, էջ 58:

Սարուպի՝ «այլը» օտարն է, ով չի պատկանում խմբին, ով խմբի անդամ չէ: Ազգային պետություններում օտարը նա է, ով չի պատկանում այդ երկրին, այսինքն՝ չունի այդ երկրի քաղաքացիությունը²⁹:

Անհրաժեշտ է նշել, որ հիբրիդ ինքնությունը հնարավոր է, որ հանգեցնի պատկանելության զգացման կորստի, քանի որ այն միշտ դիտվում է «նորմ» ասվածից տարբեր: Բհարաի հետ հարցազրույցում Ռութեֆորդը նշում է, որ նորմը ձևավորվում և շրջանառվում է հյուրընկալ հասարակությունների կամ գերիշխող մշակույթի կողմից, որոնք թեև բաց են այլ մշակույթների նկատմամբ, այնուամենայնիվ սեղմում են իրենց շրջանակը, որի մեջ պետք է տեղավորվեն բերված «տարրերը»: Նորեկները հյուրընկալ հասարակություններում փորձում են ստեղծել իրենց փոքր համայնքները՝ որպես նոր տարածությունում սպասվող վտանգներից պաշտպանողական մեխանիզմ: Ըստ Յարիսոնի և Փիքոկի՝ այդպիսի խմբավորումների բաժանվելը նորմալ գործընթաց է: Այն թույլ է տալիս մշակել կանոններ՝ խմբի այլ անդամների հետ հարաբերվելու համար, որոնք վստահելի են, և ունենում են կարելի է ունենալ ընդհանուր արժեքներ: Իսկ այլ խմբի անդամները դիտվում են որպես անկանխատեսելի և այլ արժեքներով առաջնորդվող: Սա ևս նորմալ գործընթաց է, երբ շեշտադրվում են ներխմբային մանրությունները և այլ խմբերի հետ տարբերությունները, թեև այն երբեմն կարող է վերածվել չմտածված խմբային ֆավորիտիզմի³⁰:

Այսպիսով, սփյուռքը դիտելով որպես նոր սոցիալական տարածություն՝ ինքնության հարցադրումները վերաիմաստավորվում են: Այս սոցիալական ձևում առաջնային է համարվում խմբային սահմանների պահպանումը, որը դիտվում է որպես էթնիկ ինքնության պահպանման միջոց: Սակայն անհրաժեշտ է նշել, որ սփյուռքը՝ որպես նոր սոցիալական տարածություն, ներառում է ինչպես հայրենիքի, այնպես էլ հյուրընկալ հասարակությունների իրականությունները: Ըստ այդմ՝ խնդիրը միայն էթնիկ ինքնությունների պահպանումը չէ, այլև սփյուռքային ինքնությունների ձևավորումը: Վերջիններս կապվում են հիբրիդության հետ: Իսկ նրանք, ովքեր կրում են հիբրիդայնությունը, հասկանում են, որ իրենք միաժամանակ պատկանում են և՛ ներսին, և՛ դրսին, սահմանների վրա են, տարբեր համայնքների անդամներ են և ունեն մի քանի քաղաքացիություններ: Նրանք, փաստորեն, իրականացնում են տարբեր դերեր տարբեր համատեքստերում: Նրանք հանդես են գալիս մի քանի դիրքերից և ներկայացնում են տարբեր իրականություններ: Նրանք միշտ գտնվում են կապի, վերաիմաստավորման և վերասահմանման գործընթացներում: Ստացվում է, որ հիբրիդայնությունը հնարավոր չէ ընդունել կամ մերժել, քանզի այն դարձել է սոցիալական և մշակութային փաստ:

Բանալի բառեր – *սփյուռք, սահմանների պահպանում, նույնականացում, «մենք - նրանք», հիբրիդ ինքնություն*

²⁹ Տե՛ս **Sarup Madan**, Identity, Culture and the Postmodern World, Edinburgh University Press, 1996, էջ 7:

³⁰ Տե՛ս **Harrison Neil, Peacock Nicola**, Cultural Distance, Mindfulness and Passive Xenophobia, British Educational Research Journal, 36(6), 2010, էջ 880:

АКОП МАТЕВОСЯН – К проблеме формирования диаспоральной идентичности. – Статья посвящена вопросам идентичности в диаспоре. Её исходный пункт – определение диаспоры, которая постоянно находится в процессе очерчивания и сохранения своих границ. Этот процесс тесно связан с формированием групповой идентичности, которая никогда не фиксируется, изменчива во времени и чувствительна к изменениям окружающей социальной среды. В известном смысле диаспора представляет собой новое социальное пространство для эмигрантов, вольно или невольно вовлечённых в переформирование и переопределение своей идентичности. В статье затронута проблема поколений, чья идентичность формируется “в промежутке”. Идея “промежуточности” вызывает дискуссии о гибридной идентичности, новой форме идентификации.

Ключевые слова: *диаспора, сохранение границ, идентификация, "мы – они", гибридная идентичность*

НАКОВ МАТЕВОСЯН – On the Issues of Diasporic Identity Construction. – Current article is an attempt to highlight the identity issues in diasporic formations. The main starting point is the definitional approach of diaspora which according to our view is a process, and under on-going construction aiming at defining and maintaining its boundaries. Boundary maintenance is closely related to the group identity construction which also perceived to be never fixed and changeable over the time and sensitive to the changes in the surrounding social environment. The diaspora in other sense is presented as a new social space for immigrants who voluntarily or involuntarily are engaged in their own identity re-definition and re-construction. The article illustrates the issue of generations on the base of ‘in-between’ identity construction. The idea of ‘in-between’ identity takes us to the discussion of hybrid identity as a result of a new form of identification in a new third space.

Key words – diaspora, boundary maintenance, identification, "we-they", hybrid identity